ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՅԵԼԱԿԱՆ

ՓԵՏԵՐԲՈՒՐԳ

Տարին 10 բուրլի, կիս տարով 6 բուրլի, երեք ամիսը՝ 3 բ. 50 կ.
Բաժանորդագրութիւնը կընդունուի Տփղիս, Редакція „Нор-Дня“, փետրուարի 1 բ., հասած՝ 5 կ.
Առանձին համարը 1 բ., հասած՝ 5 կ.
Խմբագրութիւնը կը խնդրուի ուղղել միայն հետևեալ հասցէով՝ Редакція „Нор-Дня“, Тифлисъ, въ Редакцію газеты „Нор-Дня“.
Հայկական տպարանը Տփղիսի մէջ, Մեծ փողոցի վրայ, № 40 ՝ի քով։
Ընդունուում են նաև գրասենեակներում հետևեալ լրագրների բաժանորդագրութիւնները և յայտարարութիւնները՝ Петербургскій Листокъ, Новое Время, Русскія Вѣдомости, Русскія Вѣдомости, Русь, Московскія Вѣдомости, Московскій Листокъ, Московскій Курьеръ, Русскій Курьеръ, Русскій Листокъ, Русскій Труженикъ, Русскій Труженикъ, Русскій Труженик

որ և է հրէայ ազգաւոր, մի հրէայ, որ փողոցում կանգնէր և ողջմտութիւն խնդրէր։ Ինչ է, հրէայ ազգասէրը, կարօտեալները չկան։—Կան և խիստ շատ. բայց իւր պարտքը հասկացող հրէական հասարակը բարեգործութիւնն չէ անում բարեգործութեան ոգով։

ՔՐՈՆԻԿՈՆ

«Վարչական Տեղեկի» մէջ հրատարակուած է հետեւեալ պաշտօնական հաղորդագրութիւնը.

«Այս տարուայ հոկտեմբերի 24-ին և 25-ին Վարչալի համալսարանում կատարուած անկարգութեանց գործի համար համալսարանի դատարանին յանձնուած 244 ուսանողներից արձակուում է 1 ուսանող, 2 տարի ժամանակով հեռացուում են 6, մի տարի ժամանակով հեռացուում են 19, մի տարի ժամանակով արձակուում են 59, համալսարանի վարչութեան տեսանում յանդիմանութեան են ենթարկուում 34, ռեկտորի յանդիմանութեան են ենթարկուում, տուգանքի գրքի մէջ անցկացուելով, 23 և ռեկտորի յանդիմանութեան են ենթարկուում, առանց տուգանքի գրքի մէջ անցկացնելու, 4 հոգի, մնացած 99 ուսանողներն արդար են ճանաչուած։

«Լուսաւորութեան պ. մինիստրի կարգադրութեամբ, որ տեղի ունեցաւ Վարչալի պ. ընդհանուր-հրահանգչական հետ կապուած համաձայնութեամբ, 54 ուսանողների համար, որոնց առաջին տարին է, որ համալսարանում են գտնւում և որոնք պէտք է արձակուէին 1 տարի ժամանակով, այդ պատիժը փոխուած է, և դրա տեղ նրանք ենթարկուում են յանդիմանութեան համալսարանի վարչութեան տեսանում։ Սրա համեմատ, զրահազեն կարգի յանդիմանութիւնների ենթակայ բոլոր ուսանողների պատիժը մի տասիճան քչացրած է։

«Այսպիսով համալսարանից դուրս կը ձգուեն, կարձակուեն և կը հեռացուեն 30, յանդիմանութեան կենթարկուեն 111 և արդարացած են 103 ուսանող»։

—

Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուն, «Ցերսկ. Վեդ.»-ի տեղով, առաջիկայ տարուայ փետրուարին կանչուում է Պետերբուրգ մանակցելու պոլիտեխնիկումի համար տեղ ընտրելու խնդրի քննութեանը։ Միևնոյն ժամանակ Պետերբուրգում կըլինի Կովկասի իշխան կառավարչապետը, պոլիտեխնիկումի խնդիրը վերջնականապէս կըվճռուի փետրուարին։

—

Դեկտեմբերի 27-ին Թիֆլիսի քաղաքային խորհրդի դահլիճում նշանակուած է քաղ. վարչութեան անդամների և առանձնապէս հրաւիրուած անձերի մասնաւոր խորհրդակցութիւն Թիֆլիսում հիմնուելիք պոլիտեխնիկումի համար գրամական միջոցներ գտնելու մասին։

—

Թիֆլիս հասած անդրկովկասեան նահանգապետների խորհրդակցութիւնները առժամանակ դադարել են։ Զատ նահանգապետները վերադարձել են իրենց պաշտօնատեղերը և Ծննդեան տօներից յետոյ կրկին պատասխանատուութեան է դրծել։

Դեկտ. 24-ին կաթոլիկների վերեզմանատունը հողին պիտի յանձնուի հանգուցեալ Պլուշչեւսկու մարմինը, եթէ մի արգելք չըլսուսնի։ Ըստ լսուածի, որովհետև կաթոլիկ քահանան հրաժարուել է թաղելու Պլուշչեւսկուն առարկելով, թէ հանգուցեալն անձնասպանութիւն է գործել։

Դեկտ. 23-ին մի կին դիմում է նահանգական դատարանի պրոկուրորին և խնդրում է թոյլատուութիւն թաղելու Պլուշչեւսկուն. պատասխանն այն է լինում, թէ պէտք է քահանային դիմել։

Որովհետև Պլուշչեւսկու ընտանիքը (կինը և երկու աղջիկը) Թիֆլիսից բացակայում են և հանգուցեալը տեղս մեռնելէ ապրում և չունի աղգական, հանգուցեալի ծառաները խնդրել են ասիկանութեանը թոյլ տալ իրենց միջոցները թաղելու իրենց ծախքով. «Հանգուցեալը մեզ համար շատ լաւ մարդ էր» ասել են ծառաները։

Ոստիկանութիւնը դեկտ. 22-ին բացել Պլուշչեւսկու բնակարանը և մի ժամուայ ընթացքում եղած իրեղէնների և գրած թղթերի մասին տրձանագրութիւն կազմել, ապա մանրամասն արձանագրութիւնը և թողած թղթերի ու իրերի ցուցակը կազմել ոստիկանութիւնը դեկտ. 24-ին։

Հանգուցեալ Պլուշչեւսկին թողել էր իւր պարապմանց սեղանի վրայ երկու ծրար և իւր վերջին ժամերի մասին մի օրագիր, որ գրուած է մի կտոր թղթի վրայ։ Մէկ ծրարը, որ երկրորդ իշխան կառավարչապետի հասցէին էր, դեկտ. 23-ին ոստիկանապետը նեղկայացրեց ըստ պատկանելոյն։ Միւս ծրարը, որ սիրելի Ս-ի հասցէին է, նոյնպէս դեկտ. 23-ին ոստիկանութիւնը յանձնեց տիկնոջը, պրոկուրորի կարգադրութեամբ վերջինից ստորագրութիւն առնելով, որ նամակը պիտի վերադարձնէ պրոկուրորին։

Պլուշչեւսկին իւր կեանքի վերջին ժամերում գրել է, որ դեկտ. 15-ին որոշել է սպանել իւր գլուխը և նրան, որ իրեն անպատուել է։ Այնուհետև գրուած է, որ «Լանդոն» հիւրանոց է գնացել իշխ. Բագրատիոն-Մուխրանսկուն սպանելու, բայց այնտեղ չէ գտել, յետոյ սպանութեան գործի նախընթաց օրը գնացել է «Կրուժոկ», բայց այդ անգամ նոյնպէս չէ առ-

ջողուել։ Վերջին խօսքն այս է. «7½-ն է. ժամանակը հասաւ։ Պլուշչեւսկի»։

—

Պլուշչեւսկու մարմինը անպատշաճաւոր պատրաստել են նրա կողմը բուն ամենայնի կարգին և օրգաններըը առաջ, թէպէտև հանգուցեալը 76 տարուց անց էր։

Պլուշչեւսկու բնակարանում չորս շիշ կայ լիքը գործերով և բոլորն էլ կարգի դրուած։ Կայ և մի մեծ ծրար լիքը կառավարական թղթերով, նոյնպէս վեքսէլներ. շատերի վրայ գրուած է. «Պարտ եմ վճարել այսքան և այսքան հազար րուբլի»։

40-ական թուականներից Պլուշչեւսկին Լեհաստանից Թիֆլիս գալով և մինչև վերջը միշտ մօտիկ յարաբերութեան ունենալով երկրիս զօրաւորների, իշխանաւորների և հաշուառանների հետ, շատ գործերի և գործիչների կուլիսի հետ լաւ ծանօթ էր։ Ասում են, որ նա այդ մասին ունի կազմած մանրամասն օրագիր։ Անտարակոյս այդ օրագիրը շատ կողմից հետաքրքրական է. երևի մի օր լոյս կը տեսնի։

Շատերը զարմացած են մնացել, որ Պլուշչեւսկին ծերութեան հասակում այնքան ոյժ և էներգիա է ունեցել որ կարողացել է այդպիսի վճռական բայլ անել և այն՝ մանրամասն հաշուելով և հետեւողականութեամբ։ Նախ մեծ խնդիրը, յետոյ ամենալաւ սիստեմի ատրճանակը, յետոյ՝ որտղի դանակը և խառնակութեան միջոցին այնքան կամքի ոյժ, որ ոստիկանը երբ նրան ասում է թէ պէտք է նրան առաջին ուշաստակը տանի, նրան պատասխանում է թէ ոչ՝ նա երբորդ ուշաստակ կըգնայ և այդպէսով նրան մոլորեցնում է և ժամանակ է գտնում ատրճանակով իւր կեանքին վերջ տալու։

Ցաւալին դէպը ընտանեաց կարծիքն այն է, որ ծերութեան հասակում պղպիսի վճռականութեամբ սպանութիւն և անձնասպանութիւն գործողը պէտք է որ շատ տրտում, վերին աստիճանի նեղացած լինի։

—

Դեկտեմբերի 23-ին Ջուշում վերջացաւ Փերումեանների գործարանի վրայ եղած գինուած յարձակման գործի դատաքննութիւնը։ Այդ ամէն տեղական ռուս թերթերին հետաքրքրում են, որ

մեզ պատրաստ ուրեմն Ազրատ-Բագրը դատապարտած է ամենաանիւը աշխատանքների անորոշ ժամանակով։ Իսկ Խուրլարեանը և մնաց բոլոր մեզ պատրաստ են արդարացած են։ Դատարանում ներկայ եղող բազմութիւն հասարակութեան վրայ դատավճիռը զօրեղ տպաւորութիւն է թողել։

—

Կին-դեղագործների թիւը Ռուսիայում ներկայումս հասնում է 29-ի։ Իսկ դեղատնային գործով պարապող կանանց ընդհանուր թիւը, որոնց մէջ հաշուած և դեղատների աշակերտուհիները 100 է։

Դեկտ. 26-ին, ուրբաթ օրը, «Թիֆլիսի ժողովարանում» նշանակուած է երգիչ պ. Ջահրամեանի համերգը Ցիմ օրիորդների մանակցութեամբ։

—

Մենք տացել ենք հետեւեալ նորագոյն հրատարակութիւնները.

1) «Օքերոնի հրաշալի աղջիկը», հեքիաթ, պատկերապարդ, մանուկների համար, հրատ. Հրատ. Ընկերութեան, Թիֆլիս, 1897 թ., գինը 40 կ.։

2) Վահան Ջահրեան—«Մարգու մը պատմութիւնը», Ռուսչուկ, 1897., գինը 50 առնուրս։

—

«Նոր-Դար»-ի առաջիկայ համարը լոյս կըտեսնի շաբաթ, դեկտ. 27-ին։

—

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

ՄՈՍԿՈՒԱՅԻՑ.—Այվազովսկու մի նոր ծովանկարը՝ «Փլուզութիւն հայցողների» ի ցոյց է դրուած աշտակի նշանաւոր թղթավաճառանոցներից մէնում։

—Լև Տոլստոյը վերջացրել է իւր մի նոր ընդարձակ յօդուածը «Գեղարուեստի մասին», որ տպագրուելու է «Вопросы филос. и психол.» ամսագրի մէջ՝ յունուարի գրքոյկից սկսած։

ԲԱՓՓԻԻ ԵՐԿԵՐԻ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ

(Նամակ խմբագրութեան)

—

Երբեմն գանւում են անհատներ, որ բոլորովին անծանօթ լինելով գրքեր հրատարակելու գործին, համեմատում են հայերէն գրքերի արժէքը եւրոպական էժանագին հրատարակութիւնների հետ

—«Ես այդպէս եմ. ինձ տուողը տուրը դառնայ, ինձնից առնողը կուրանայ»։ Ա՛յ կոյր չեմանես դու։

***

Ընթերցող, էչութիւնը և տգուէստութիւնը մեր ամենամեծ անկեաններն են։ Մի յիսուն տարի առաջ էշերը տգուէս էին, տգուէսնները էշեր, իսկ այժմ տգուէսները էշացել են, էշերը տգուէսացել. այս մետամորփոզան էլ մէկ անկեալ է։ (Մետամորփոզա մեր լեզուով նշանակում է՝ էշտգուէսատփոխութիւն)։ Մէկին էշ են ասում, միւսին տգուէս, իսկ երրորդին էշ տգուէս։ առաջին երկուսը ամեն տեղ էլ ասւում են, բայց «էշ տգուէս» առաջին անգամ եմ լսում։ Էշը ծայրայեղ բարութեան նշան է, տգուէսը ծայրայեղ չարութեան, իսկ էշ տգուէսը—չգիտեմ թէ ինչ բան է։ Առաջինների մասին լսածս պատմեցի, իսկ այս վերջինի մասին տեղեկութիւն չստացայ։ Ասում են, որ մի ժամանակ էշ տգուէս կինդանի էլ է եղել, բայց չգիտեմ թէ երբան ճիշտ է։ Էհ, ինչ զարմանալու բան է. երբ հին Յունաց մէջ սիրան, սատիւր և գինոատւր աստուածները էլ կային, ինչու մեր մէջ էշ տգուէս չլինի։ Բայց և այնպէս առակախօսութիւնը կամ մատնիներով խօսելն ու փիլիսոփայութեան անուլը մեր շուչացոյց առանձնայատկութիւնն է. չը կայ չուշեցի, որ դրանից հետու կամ ուրիշ լինի, այդ ազգային յատուկ ժառանգութիւն է և դրա ճշտութիւնը որոշելը կամ իմաստի բացատրութիւնը դրանցն էլ ամենամեծ անկեալն է։

Էլիկայ։

ԴՈՒՏՈՒ

Ց. Խաչատրյանին.

Ձեր նամակում կարդում եմ, որ ամեն գիշեր ձեզ մոտ է գալիս ձեր մահացած ամուսնու ստվերը, որ ձեզ հետ խոսում է, ինչպես կենդանի ժամանակ, և որ դուք ուզում եք իմանալ, թե ինչ է նշանակում այդ երևույթը։

Ձեր նամակը ես ստացել եմ ուշացումով, որովհետև ես ամառը ամբողջ ամիսներով գյուղում եմ ապրում, և ձեր նամակը ինձ հասել է միայն վերջերս։ Ուրեմն ներողություն եմ խնդրում ուշանալու համար։

Ձեր ամուսնու ստվերը ձեզ հետ խոսում է, ասում եք, ինչպես կենդանի ժամանակ։ Ես կարծում եմ, որ դա ոչ թե ստվեր է, այլ ձեր ամուսնու հիշատակը, որ ձեր հոգու մեջ է մնացել։ Ձեր ամուսինը ձեզ համար ամենամեծ սերն է ներշնչել, ուրեմն և ամենամեծ հարգանքը, և ձեր հոգու մեջ նրա հիշատակը ամենամեծ ուժն է։ Ձեր ամուսնու հիշատակը ձեզ համար ամենամեծ սրբությունն է, և ձեր հոգին ամենամեծ ուժով է նրան կապված

բէկը ասել է. կաշխ կըմաշկեմ և զարմանով կըլցնեմ և կախ կըտամ»: Բոլոր վկայութիւններից յայտնի կերպով երեւում է, որ մեր Ղարաբաղում կան հաւատարիմ հպատակներ ունեցող իշխաններ, որոնք անում են, ինչ որ ուզում են: Այժմ էլ տեսնելով, որ գործերը բացուել են և վկաները և կալանաւորուած վաճառներից շատերը ձրիակ ի բաց հրապարակ են հանում իրենց զբէխաւորների գործերը և բոլոր աւազակութիւնների մէջ մեղադրում են պոլիցիականներին և այդ բէկին, ինչպէս լսեցինք, ուզեցել են բանից դատարան տանելիս սպանել այդ «արեստանաններին»: Իշխանութիւնը այդ իմանալով այժմ բազմաթիւ զինուորներով է տանում բերում և լսում ենք, որ չուտով 200 զազախ է գալու Թուլքերի մէջ հանելու: Մի նշանաւոր բան էլ այս է, որ այդ վկաները իրենց մարը աչքի առաջ առնելով են վկայում ճշմարտութիւնը. թէ Թուլք և թէ հայ վկաները դատաւորի առաջ ապաշում են ապահովեցնել իրենց կեանքը: Այս բոլոր գազանիքների վրայ լոյս ձգեց և գաւառապետի օգնական ենէդնդապետ Բարանովսկին:

Այս քննութիւնը բաց է անում Ղարաբաղի աւազակութիւնների դարաւոր գազանիքը:

***

Շուշի, 20 դեկտ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՌՈՒՍԻԱՆ ԵՒ ԱՆԳԼԻԱՆ ՀՈՐԻԶՈՒՄ

—

«Daily Mail» լրագրի մէջ մի հեռագիր էր տպագրուած Չանղհայից, որի մէջ հաղորդում էր, թէ անգլիական 17 մարդանաւ, ծովակալ Բիլլերի հրամանատարութեան ներքոյ, մեկնել է Քորէայի Հեմուլպո նաւահանգիստը, Քորէայի թագաւորին վերջնագիր տալու համար: Հեռագրի մէջ հաղորդում էր նաև, թէ անգլիական ծովային զինուորներն արդէն ափ են իջել: Այդ տեղեկութիւնը հաստատում է «Temps» լրագրի Թոկիոյի կիսը, որն այդ առթիւ հետեւեալ մանրամասնութիւնները է հաղորդում.

«Ծովակալ Բիլլերը նպատակ ունէր պաշտպանելու բրիտանական ընդհանուր հիւպատոսի Քորէայի թագաւորին տուած բողոքը: Այդ բողոքի իսկական նշանակութիւնը, սակայն, այն էր, որ բրիտանական ընդհանուր հիւպատոսն ուզում էր Քորէայի թագաւորին հասկացնել, որ նա իւր երկրի ամբողջ վարչութիւնը իրապէս յանձնել է ռուսաց ներկայացուցչի ձեռքը: Բայց, ի հարկէ, բողոքի մէջ այդ մասին չէր խօսում ուղղակի, այլ միայն թագաւորի ուշադրութիւնն էր հրաւիրում այն հանգամանքի վրայ, որ մաքսային վարչութեան մէջ պաշտօն ունեցող անգլիայի Մաքսի Լէի-Բրօունի տեղ նշանակուած է ռուս պաշտօնեայ:

«Անգլիացիների երեսը մեծ իրարանցում ձգեց Սէուլում (Քորէայի մայրաքաղաքը), մանաւանդ որ տեղեկութիւն էր ստացուած, թէ ձափոնեան Նագասակիից 30 նաւից բաղկացած մի նաւատորմ է ճանապարհել արդէն, մտադիր լինելով պաշտպանել Անգլիայի բողոքը,

«Անգլիական զօրքը ափ իջաւ Հեմուլպոյում, և դրանից անմիջապէս յետոյ Բրօունը վերսին ստացաւ իւր նախկին պաշտօնը:

«Ճափոնացիները, ինչպէս լսում է, այնուամենայնիւ պատրաստւում են բողոքել այն բանի դէմ, որ ռուսաց զօրքեր են եկել Քորէա»:

ՌՈՒՍԻԱՆ ԵՒ ԱՆԳԼԻԱՆ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ

—

Հետեւելով անգլիական լրագիրների հերքումներին, «Köln. zeit.»-ը յամառութեամբ պնդում է, որ անգլիական «Daphne» մարտանաւը գազանի կերպով մտել է Պորտ-Արտուր, որպէս զի տեղեկանայ՝ այնտեղ է արդեօք ռուսաց նաւատորմը, թէ ոչ: Այդ առթիւ յիշեալ լրագրին հեռագրում են Պարիզից:

«Անգլիական մամուլը սուտ լուրեր է տարածում անգլիական զինուորական «Daphne» նաւի Պորտ-Արտուր մտնելու մասին: Նոր ստացուած հաւաստի տեղեկութեանց հիման վրայ ես կարող եմ հաստատել ոչ թէ միայն իմ հաղորդած նախորդ տեղեկութիւնները «Daphne»-ի մասին, այլ և լրացնել նոր հաւաստի տեղեկութիւններով: «Daphne» նաւը, չնայելով Պորտ-Արտուրի չինաց կապիտանի վճռական բողոքին, մտաւ այդ նաւահանգիստը, կուրի պատրուակ. համոզուելով, որ նաւահանգստում ռուսաց նաւեր չկան, նա 24 ժամ կանգ առնելուց յետոյ դուրս գնաց նաւահանգստից և, հաւանական է, հանդիպել է անգլիական նաւախմբին, որը մի քանի ժամանակ նաւախմբին, որը մի քանի ժամանակից ի վեր գազանի կերպով շրջում է այնտեղի ջրերում: Չինաց կառավարութիւնը գանգատուել պետութիւնների Պեկինի ներկայացուցիչներին, մանաւանդ ռուսաց հաւատարմատարին, «Daphne» նաւի միջազգային իրաւունքին հակառակ այս վարմունքի դէմ, և դրանից անմիջապէս յետոյ, չնայած կառավարութեան համառայնութեամբ, Պորտ-Արտուր մտաւ ռուսաց նաւախումբը այնտեղ ձմեռելու համար: Մոռերքս, այն է դեկտ. 9-ին (21-ին) «Dephne» նաւը կրկին մտաւ Պորտ-Արտուր և զարձեալ չնայած կապիտանի վճռական բողոքի հակառակ. այս անգամ նա կարող էր համոզուել, որ նաւահանգստում կանգնած են ռուսական 3 և չինական 4 մարտանաւ: Այս փաստերն անվիճելի են»:

ԽՄԲԱԳԻՐ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ

ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԾՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՎ
(Սոլոլակ, Սադովայա փողոց, № 64)
(սեպհական տուն)
Հեռաձայն № 230

Երթեւեկ հիւանդների ընդհանուր ընդունելութիւնն երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը՝ ժամը 2 — 4 ցերեկը. վճարը հիւանդների կարողութեան համեմատ. մանուկը ընդունելութիւն՝ ամենայն օր՝ ժամը 9—10 առաւօտեան—վճարը 2 ր.: Գիշերօթիկ հիւանդներ և ծնողաբեր կանայք ընդունւում են միշերայ և օրուայ ամեն ժամանակ, բայց այդ մասին առաջուց տեղեկութիւն պիտի արուի. վճարը որոշւում է ըստ դասակարգերի: Ձուներները ձրի են: Գինեկոլոգիայի բաժանմունքը մանուկները վճարում—են 1 ր. 50 կ. մինչև 8 ր. մի օրուղիչերուայ համար. Ծննդաբերական բաժանմունքը մանուկները—1 ր. մինչև 5 ր. մի օրուղիչերուայ համար: Երկունքից ազատելը 10 ր. մինչև 50 ր.: Անդամահատութիւնը ըստ համաձայնութեան: Երթեւեկ բոլոր հիւանդները դիզեր և նիւթեր ստանում են ընդունելութեան ժամանակ ձրի: Ձուներների համար 1-ական մահճակալ է դրուած իւրաքանչիւր բաժանմունքում, ուր տեղաւորւում են նրանք տեսչի և նրա պ. պ. ընկերների առաջարկութեամբ ձրի:

Հիւանդանոցի տէր և տեսուչ՝
Մ. ՄԿՐՏՉԵԱՆ.

ՀԵՌԱԳՐՆԵՐ

ՄԱՅԼՏ, 22 դեկտեմբերի.—Ձիֆորդի դնդի առաջին զօրաբաժինը հրաման ստացաւ մեկնելու Եգիպտոս:

ՊԵԿԻՆ.—Չանթունդի թերակղզում զբաղուող Յզօա-Շու քաղաքի վերմանական միսիոնարները վախել են վերմանական զեղման բարձ հայկինդին զանգատուելով, թէ չինաց տեղապահ զօրքի հրամանատարը սպառնական ճառեր է խօսում իրենց մասին: Հայկինդը պահանջից արձակել այդ սպային իւր պաշտօնից, որը և տեղի ունեցաւ նոյեմբերի 19-ին:

ԼՈՆԴՈՆ, 23 դեկտեմբերի.—«Daily Mail»-ին Գահիրէից հաղորդում են. «Կարծում են, որ Նեղոսի ֆրանսիական արշաւախմբերը կանգնած են ուղղակի Խարթումի մօտ: Ուստի անհրաժեշտ է կարելոյն չափ չուտով հրաման տալ պահեստումի գնալու Մակդոնելի վրայ»:

«Times»-ը լսել է, որ Ջիբրալտարում դարձեալ մի հեռաձայն զօրաբաժին հրաման է ստացել գալու դէպի Եգիպտոս:

ՊԱՐԻԶ.—Սոսիէն որոշից Հասերհաղին յանձնել զինուորական դատարանի, որպէսզի դատաւճիռը կարդացուի, զօրքի պատուին անարատ մնայ և Հասերհաղի վրայ կասկած չծանրանայ: Գործի քննութիւնը տեղի կունենայ դռնիվակ յունուարի 10-ին:

ԼՈՆԴՈՆ.—«Հաւատի զործակալութիւնը» հետեւեալ հեռագիրն է ստացել. «Գահիրէում չարունակւում է անհանգստութիւնը Սուդանի գործերի առթիւ: Այստեղ գանուած անգլիական երեք զօրագնդերից երկուսը Նեղոսի ուղղութեամբ ցոյց է տալու, թէ ինչ մտադրութիւններ ունի կառավարութիւնը: Անչուշտ ուժերի ժամանակ ստացած լուրջ տեղեկութիւններ են տրկտրել անգլիացիներին գործի ձեռնարկելու, մինչդեռ նրանք պատրաստւում էին հանդիսաւ կերպով ձմերելու: Նրանք եռանդով վերջացնում են նորակոչ զինուորներ հաւաքելու գործը, անխոթիր ընդունելով ձեռքի տակ գտնուած բոլոր տեղացիներին»:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

№ 52258 8—2

Открыта подписка на 1898 г.
на еженедѣльный иллюстрированный журналъ
ВОКРУГЪ СВѢТА
14-й годъ изданія 14-й годъ изданія
50 иллюстрированныхъ №№ въ годъ.
Романы, повѣсти, путешествія, научныя статьи и пр.
КРОМѢ ТОГО БЕЗПЛАТНО
СОБРАНІЕ СОЧИНЕНІЙ
ЖЮЛЯ ВЕРНА
12 ТОМОВЪ!
ЛУЧШИХЪ РОМАНОВЪ:
Путешествіе капитана Гаттераса.—Путешествіе на луну.—Вокругъ луны.—Пять недѣль на воздушномъ шарѣ.—Ледяной сфинксъ.—Страна пушныхъ звѣрей.—Черная Индія.—Южная звѣзда.—Архипелагъ въ огнѣ.—Паровой домъ.
2 РОСКОШНЫЯ ПРЕМІИ:
1) Проф. Ю. Клевзера „Зимній вечеръ".
2) Акад. К. В. Лебедева „Отдыхъ на соколиной охотѣ". Одеограф. въ 28 кр.
ПОДПИСНАЯ ЦѢНА
НА ГОДЪ: безъ картинъ 4 р. съ двумя картинами 5 р.
съ доставкою и пересылкою.
Подписчикамъ—собраніе романовъ Жюля Верна, 12 книгъ, выданныя въ 1897 году, высылается за 2 рубля съ пересылкою.
Адресъ редакціи: Москва, Заповая ул., д. Т-ва И. Д. Сытина.
5—4

ԼՐԱԳՐԻ ՑՐԻՉՆԵՐ

Կարող են տեղ գտնել զրաւական ներկայացնելով: Ցրիչը պէտք է երիտասարդ լինի և առոյգ: Ցանկացողները կարող են դիմել «Նոր-Դար»-ի խմբագրութեանը:

ԸՄԲՆԸՑՔՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ

ՌՈԵԱԼՆԵՐ

ՓՈՇՆԱՄՈՒԹՅՈՒՆ

Փիտարմանիամներ, չուլթահներ կիթառներ, փլէյտներ, կլարնետներ, ձայնախողեր, լարեր և այլն և այլն

Բոլոր տեսակ գործիների համար զինը կարելի է վճարել մաս առ մաս.
ՆՈՐ-ՊՐԷՅՍԿՈՒՐԱՆՏՆԵՐԸ
ՈՒՂԱՐԿՎՈՒՄ ԵՆ 2ՐԻ
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՆԵՐԻ ԵՒ ՀԱՅՆԱՀԱՉԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ
ԴԵՊՕ
Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ
MУЗЫКАЛЬНОЕ ДЕПО
В. М. МИРИМАНЯНЪ
ТИФЛИСЪ, ДВОРЦОВАЯ УЛ.
397 30—25

ОТКРЫТА ПОДПИСКА НА 1898 ГОДЪ
на ежедневную политическую и литературную газету
„НОВОЕ ОБОЗРѢНІЕ".
ПЯТНАДЦАТЫЙ ГОДЪ ИЗДАНІЯ.

Въ 1898 г. «Новое Обозрѣніе» будетъ выходить въ Тифлисѣ, какъ и въ прошлые годы, ежедневно, по программѣ большихъ столичныхъ газетъ.

Въ истекающемъ году въ газетѣ, кромѣ мѣстныхъ лицъ, участвовали также К. С. Баранцевичъ, В. В. Вересаевъ, В. К. (Петербургъ корресп.) Л-вичъ, (Лондонск. корресп.) Д. Н. Маминъ Сибирякъ, М. А. Протопоповъ, акад. инж., Тархановъ, В. Е. Чешихинъ, А. С. Хах-овъ, И. Ивановъ и др.

УСЛОВІЯ ПОДПИСКИ
съ доставкой и пересылкой.

На 12 мѣсяцевъ	10 р. — к.	На 6 мѣсяцевъ	6 р. — к.
„ 11 „	9 „ 50 „	„ 5 „	5 „ 25 к.
„ 10 „	8 „ 75 „	„ 4 „	4 „ 75 к.
„ 9 „	8 „ — „	„ 3 „	3 „ 50 к.
„ 8 „	7 „ 25 „	„ 2 „	2 „ 75 к.
„ 7 „	6 „ 50 „	„ 1 „	1 „ 50 к.

За границу: на годъ—17 р., на полгода—9 р., на три мѣсяца—5 р. Подписка принимается не иначе, какъ считая съ 1-го числа любаго мѣсяца. (Для сельскихъ учителей льгота. подписная цѣна на годъ—7 р., полг.—4 р.).

Для годовыхъ подписчиковъ какъ городскихъ, такъ и иногородныхъ, обращающихся непосредственно въ контору редакціи, ДОПУСКАЕТСЯ РАЗСРОЧКА на слѣдующихъ условіяхъ: при подпискѣ вносится—3 р; къ 1-му марта—2 р., къ 1-му мая—3 р. и къ 1-му сентября—2 р.

Подписка принимается: въ Тифлисѣ—въ конторѣ газеты—Барятинская ул. № 8.

Иногородные адресуютъ свои требованія: въ Тифлисъ, въ редакцію „Новаго Обозрѣнія".

Лица, подписавшіеся на годовое изданіе „Новаго Обозрѣнія" 1898 г. въ настоящее время будутъ безплатно получать газету и въ текущемъ году со дня подписки. (ф.) 3—3.

Մ. ՉՄՇԿԵԱՆԻ
ԾՈՑԻ, ՊԱՏԻ ԵՒ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՕՐԱՑՈՑՆԵՐԸ
1898 Թ.
ԼՈՅՍ ՏԵՍԱՆ
Յանկացողները այժմանից յայտնել են, որպէսզի պատուէրները ժամանակին կատարուին
Հասցէն՝ Թիֆլիս, Մակար Չմշկեան
(850) 10—5

Дозв. цензурою, Тифлисъ, Декабря 24-го дня, 1897 г. Տպարան Ա. Ի. Պետրովի. Типографія А. И. Петрова, Голов. проспектъ, домъ № 12